ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«29» 12 2020թ.

N 25/01-25/26/08

ք.Երևան, Ն.Զարյան փ. 27
Հեռ. (011) 51-82-01

«ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ.Սարգսյանին

ՀՀ քաղաք Երևան, Վարդանանց 10/37

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ց Ի Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի միջև 28.09.2020թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/174-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ «Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, բ/ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հիմք ընդունելով Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմի տնտեսվարի 21.12.2020թ. թիվ 288 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, չի մատակարարվել տնտեսական ապրանքներ, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

կատ. Գ.Հովհաննիսյան
հեռ.011-518-151